Հանդիպում Շնողում «Եղիր իրազեկ և պահանջատեր , պաշտպանիր քո շահերն ու իրավունքները ԱՃԹՆ հայաս

Սույն թվականի մարտի 1-ին Լոռու մարզի Շնողի

համայնքապետարանում, տեղի ունենացավ «Եղիր իրազեկ և պահանջատեր, պաշտպանիր քո շահերն ու իրավունքները ԱՃԹՆ հայաստանյան գործընթացում» թեմայով հանդիպում:

Քննարկումը կազմակերպել էր

«ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ն Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն ՀԿ-ի գործընկերությամբ՝ «Հանքարդյունաբերության ազդակիր համայնքները՝ ԱՃԹՆ գործընթացի լիարժեք մասնակիցներ» ծրագրի շրջանակներում:

Ծրագիրն իրականացվում է ԱՄՆ ՄԶԳ-ի (USAID) աջակցությամբ , Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն (ԹԻՀԿ) հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Պահանջատեր հասարակություն՝ հանուն պատասխանատու կառավարման» ծրագրի շրջանակներում:

Հանդիպման նպատակը Լոռու մարզի հանքարդյունաբերական ազդակիր համայնքների ՀԿ-ներին և բնակչությանն աջակցել լիարժեք մասնակից դառնալու հանքարդյունաբերության ոլորտը թափանցիկ և հաշվետու դարձնելու ԱՃԹՆ հայաստանյան գործընթացներին:

1 / 2

Հանդիպում Շնողում «Եղիր իրազեկ և պահանջատեր , պաշտպանիր քո շահերն ու իրավունքները ԱՃԹՆ հայաս

Հանդիպմանը մասնկացում էին «Հանքարդյունաբերության ազդակիր համայնքները` ԱՃԹՆ գործընթացի լիարժեք մասնակիցներ» ծրագրի համակարգող, «էկոԼուր» տեղեկատվական ՀԿ նախագահ Ինգա Զարաֆյանը , Համայնքային համախմբման եւ աջակցության կենտրոն ՀԿ նախագահ Օլեգ Դուլգարյանը եւ ծրագրերի համակարգող Անուշ էվոյանը, հանքարդյունաբերական ոլորտի փորձագետներ:

2 / 2